ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն՝ հայոց լեզու և գրականություն

Թեմա՝ Նորավեպերի ուսուցումը. Գրիգոր Զոհրապ

Կատարող՝ Իգիթյան Անահիտ Ռոբերտի
Ազգանուն, անուն, հայրանուն

Ղեկավար՝ Դանիելյան Սուրեն
Ազգանուն, անուն

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
գիտական աստիճան, կոչում

ԵՐԵՎԱՆ 2022

Ներածություն

Առարկայական նոր չափորոշիչների և դրանց արդյունքում նոր ծրագրերի ընդունմանն ընդառաջ բազմաթիվ տարաբնույթ առաջարկությունների և որոշումների մեջ կարևորվում է գրականության ծրագրերի թեմատիկ բաժանումը: Փաստորեն գրականության պատմության ժամանակային ձևից անցում է կատարվում թեմատիկ ձևին՝ ինչ-որ ձևով փորձելով պահել նաև ժամանակային հաջորդականությունը:

Ավագ դպրոցի գրականության ծրագրերում առաջարկվում է թեմաների տարողունակ մի սանդղակ և դրա հիման վրա էլ առաջարկվել են այս կամ այն հեղինակի և նրա ստեղծագործությունների քննությունը.

1. Ինքնություն և մշակույթ
2. Փոփոխություն և հեռանկար
3. Մշակույթ և բարքեր, անհատ և հասարակություն
4. Արժեքային համակարգ, աշխարհայացք
5. Արվեստ, գեղագիտություն, երևակայություն,
6. Քաղաքականություն, ուժ, արդարություն
7. Մարդ, բնություն, տեխնոլոգիա[1]

Թեմաների բազմազանության մեջ, ելնելով արևմտահայերենով ստեղծված գրականության ուսուցման առանձնահատկություններից ու դժվարություններից և նորավեպի զուտ ժանրային առանձնահատկություններից, Զոհրապի նորավեպերի թեմատիկան և դրանց ուսուցումը պահանջում է մոտեցման որոշակի ուղղություն, քանի որ նորավեպերի թեմատիկան անխառն չէ, և շատ հաճախ փոխկապակցվածությունը կարող է պահանջել, որ «Գրիգոր Զոհրապ» թեմային անդրադարձ կատարվի և՛ «Մշակույթ և բարքեր, անհատ և հասարակություն», և՛ «Արժեքային համակարգ, աշխարհայացք» և՛ անգամ «Փոփոխություն և հեռանկար» խորագրերն ուսումնասիրելիս:

[1] https://escs.am/files/files/2020-07-17/0c0bec6bd1b12c6389919925ac049d7e.pdf escs.am

Գրիգոր Զոհրապ հեղինակը, արևմտահայ հասարակական գործիչն ու գրողը, հրատարակիչն ու փաստաբանը, ազգային գործիչն ու մտավորականը հարկ է որ բացահայտվեն այս ամենից առաջ և առաջին հերթին նրա ստեղծագործությունների և նրա՝ մտավորականի դիմագիծը պիտի լինեն քննության ու պարզաբանման խնդիր:

«Մորեգույն կոստյումը հագին, սև թիթեռնիկ փողկապով ու սպիտակ վերնաշապիկով, ձյունե բաճկոնակի մեջ, գեր, կարճահասակ, աշխույժ մարդը, որի խնամքով հարդարված ալեխառն բեղերի քիչ վեր թեքվող կորությունը վստահություն ներշնչող և բարեկիրթ մի բան էր հաղորդում նրա ամբողջ արտաքինին, փնտրված մեկն էր Կ.Պոլսո դարասկզբին կազմակերպված հանրային հավաքույթներում, ուր աշխուժորեն քննարկվում էին օրվա դեպքերը, բարեգործական ձեռնարկումները, գրական ասուլիսներում հայտնված կարծիքները, թատերական ներկայացումները: Նա անցնում էր մարդկանց մեկ խմբից մյուսը, ամենածայրահեղ բարեկրթությամբ բարևում՝ հասկանալով մեծ մարդու թողած տպավորության ամբողջ ինքնամեծար արժեքը», կարդում ենք նրա մասին[2] :

Հարկ է, որ ուսուցիչը, անկախ իր նպատակադրումից, թեմայի պահանջից ու սահմաններից կարողանա մոտավորապես այս ձևով ներկայացնել Զոհրապին, ապահովել երեխաների մոտ նրա մարդկային բարձր արժանիքների գիտակցումը, ըմբռնելի դարձնել զոհրապյան արժեքները ու նոր անցնել առաջ:

Կենսագրականի մեջ կարևորվելու է նաև նրա ազգային, հասարակական նկարագրի բարձրաձայնումը: «Երեսուն տարվա իր հասարակական գործունեությամբ և գրական վաստակով նրաստեղծագործությունները սկսել էին թարգմանվել նաև թուրքերեն, հրապարակային կրակոտ ելույթներով, Պոլիսը տեղաշարժող դատավարություններում ձեռք բերած հաղթանակներով, մանավանդ դասախոսություններով, պերճախոսությամբ միշտ էլ աչքի ընկած ճառերով թե՛ Ազգային ժողովում, թե՛ Օսմանյան մեջլիսում, տարիքն առած, 50-ին մոտեցող, վայելած, շատ բան տեսած գրողը, որ անցել էր կյանքի մեջ ճանապարհ, հիմա արդեն կարող էր զարմանալ իր համառության վրա: Բնիկ ակնեցու զավակ, փաստաբանի գրագրի պաշտոնից հասավ մինչև Օսմանյան խորհրդարանի անդամի բարձրապատիվ աթոռը …»,- կարդում ենք նույն գրքի առաջաբանում[2] :

Հատկանշական է, որ իր «Գրիգոր Զոհրապ» մենագրության մեջ գրականագետ Մինաս Հյուսյանը մեջբերել է քննադատ Մատենճյանի խոսքը. «Գրիգոր Զոհրապը մեր ամենանրբաճաշակ հեղինակն է.այս պատճառով էլ նրա երկերը վաղ թե ուշ պիտի հեղաշրջեն գրելու արվեստի մասին մեր ունեցած հնացած հասկացողությունները»[2] :

Հենց առաջին դասից սովորողները պիտի համոզվեն, որ Զոհրապի տաղանդի հմայքը, գրելու նուրբ ճաշակը իր կիրառած ժանրերից առավելապես արտահայտվել է

[2] Գրիգոր Զոհրապ, Երկեր, Երևան, 1989թ., III

նորավեպերի մեջ: Ու այդ հարցում նա շուտ կողմնորոշվել: Տեղին է հիշատակել, որ իր արձակ բանաստեղծություններից մեկում («Էտլվայս») Զոհրապն ասում է, որ «չափազանց տևողությունն իսկ բանի մը, անտանելի է սրտիս»: Կարո՞ղ էր այսպիսի բնավորություն ունեցողը ծավալուն երկեր գրել: Հետևությունը հանգում է նորավեպի ժանրային առանձնահատկությունը քննելու անհրաժեշտությանը: Նորավեպի փոքր ձևը, նորությունը, արտասովոր եղելությունը, անսպասելի վախճանը, նմանությունը բանավոր պատմության և սրան ի հետևություն՝ սեղմ, կենտրոնացված կառուցվածքը, մեկ միասնական թեման, պատրաստի կերպարները և դրանց պատկերումը կյանքի որևէ շրջադարձային պահի, դրամատիկ տարրի առկայությունը, գործողության լարունությունը, առհասարակ արագ թափը, սրընթաց զարգացումը դեպի վերջը՝ այս ամենը Զոհրապի գեղագիտական ու իրականության ընկալման շրջանակում է:

Երբ այս ամենը ուսուցիչը ներկայացնի, նորավեպերը արդեն ընթերցած աշակերտը կարող է տեղին դիտողություն անել, թե շատ նորավեպերում արտասովոր եղելություն ու անսպասելի վախճան չկա, նրանցում կերպարները ոչ թե պատրաստի, անփոփոխ են, այլ տրված են զարգացման մեջ, նրանցում կյանքի ոչ թե շրջադարձային պահն է պատկերված, այլ ամբողջ կյանքը:

Շատ կարևոր է, որ սովորողները տեղեկացվեն այն իրողությանը, որ Զոհրապի նորավեպերում շատ տիպարներ իրական են: Բոլոր սերունդների, բոլոր ընթեցողներին մտատանջող կարևորագույն հարցը այս կամ այն կերպարի հնարավոր իրական լինելու տարակույսն է: Այստեղ տեղին կլինի մեջբերել Զորհրապի մեծ բարեկամ, գրող Հրանտ Ասատուրի միտքը.«Նորավեպերուն մեջ իր ներկայացուցած տիպարներեն շատը կառներ իրականեն: Հաճախ քող մը կձգեր անոնց վրա, որպեսզի չճանչցվին, բայց երբեմն ալ այդ քողը շատ նուբ կըլլար և ակնարկությունը՝ թափանցիկ: Իսկ իր վիպագրած կիները Զոհրապ կջանար խնամքով սքողել. իր մտերիմները միայն կրցած են գուշակել, թե որոնք եղած են իր նորավեպերեն ոմանց իրական տիպարները»[3]:

Ու երբ սովորողի զուտ մարդկային հետաքրքրասիրությունը բավարարված է, նոր կարելի է անցնել գեղարվեստականության, կառուցվածքի և այլնի քննությանը, ընդ որում՝ առանձին-առանձին:

Կանխապես պիտի ինչ-որ կերպ լուծել նաև արևմտահայերենի և արևելահայերենի «լուռ թշնամանքի» խնդիրը: Ու առաջին հերթին Զոհրապով պետք է լուծել, եթե, իհարկե, ժամանակին բաց է թողնվել Պարոնյանով այդ հարցը լուծելու պատեհությունը: Հենց դասարանում որևէ նորավեպի դանդաղ ընթերցումը, գեղեցիկ ընթերցումը՝ անծանոթ բառերի, անսովոր քերականական ձևերի բացատրությունով, հնարավորություն կտա սովորողին արևմտահայերենով միտք ու պատկեր հասկանալու, գեղագիտական

[3] Հրանտ Ասատուր, Դիմաստվերներ, Կ.Պոլիս, 1921, էջ 244

առումով նորավեպը վերագնահատելու՝ մտքից սահուն անցում կատարելով արվեստին, զոհրապյան անսովոր, անսահման գեղեցիկ արվեստին:

Ընդհանրական խոսքը, նորավեպերի ուղղվածությունը ներկայացնելուց առաջ հարկ է նշել, որ զոհրապյան նորավեպերն ունեն կառուցվածքի մի քանի ընդհանուր հատկանիշներ՝ արտակարգ հակիրճություն, նախնական, բայց անհրաժեշտ գաղափար տվող ուրվագծերով կերպարներին ներկայացնելը, այնուհետև նրանց էության լիակատար բացահայտումը գործողության, բախման մեջ, որով կերպարների դրամատիկական բնութագրման գերակշռելը նկարագրական բնութագրման համեմատությամբ, հաճախ հետադարձ հայացքով հերոսի կյանքի ամբողջ պատմությունը տալը, բուն նյութից սկսելը, զարգացման արագ թափը՝ ասպասելի վախճանով, գեղագիտական նուրբ ճաշակի առակայությունը, ինչպես նաև գերագույն պարզությունն և հստակությունը: Դասարանը պիտի ամբողջության մեջ ընկալի նորավեպի, զոհրապյան նորավեպի առանձնահատկությունը:

Այնուհետև կարելի է անցնել նորավեպերի բովանդակային քնությանը և շեշտել, որ Զոհրապը գրել է սոցիալական, կենցաղային, հոգեբանական, քնարական և փիլիսոփայական նորավեպեր: Որոշ նորավեպերում իրոք նկատելի է սոցիալական («Փոստալ»,«Ժամին բակը»,«Ճիտին պարտքը»), կենցաղային («Կանանց բժիշկը», «Հակոբիկ»,«Լուսահոգին»), հոգեբանական («Ֆուրթունա»,«Մարապետը», «Մյուսը»), սակայն փոխադարձաբար այդ տարրերը ներթափանցում են, լրացնում են իրար, և միևնույն գործի մեջ հեղինակը թե՛ սոցիալական վերքեր է մերկացնում, թե՛ կենցաղն ու բարքերը ցուցադրում, թե՛ խորանում է կերպարների հոգեբանության մեջ, դրսևորում քնարական բազմերանգ հույզեր՝ միշտ պահպանելով խորհրդածողի ներկայությունը: Այս վերջինը սովորողը մշտապես պիտի զգա, պիտի զգա, որ գրողը սոսկական նկարագրող չէ…

«Ամբողջ փիլիսոփայություն մը երկու- երեք նախադասությանց մեջ, գրում է Սիպիլը, - որուն վրա կարելի է հատորներ գրել և որոնք… անկեղծ, խիզախ, սլացող, քայքայող ու շինող իր մտքին փայլակներն են և կը լուսավորեն ու կը ներշնչեն ամեն դասե, ամեն սեռե ընթերցողները»[4]:

Կարևորվելու է, որ ամեն մի գրողի երկերի մեջ կան անշուշտ առավել արժեքավորներ, գլուխ գործոցներ, և այս տեսակետից Զոհրապը բացառություն չէ, սակայն, բացի սկզբնական շրջանի մեկ քանի նորավեպերից, մնացածները արվեստի այնպիսի կատարելություններ են, որ դրանցից ամեն մեկը, երբ բերում ես աչքիդ առջև, խորանում նրա մեջ, տեսնում ես, որ նույնպիսի գոհար է, նույնպիսի ադամանդ, միայն մի այլ երանգի. փոխվում է երանգը, բայց ադամանդը մնում է մաքուր տեսակի:

Ընթերցող աշակերտը Զոհրապի նորավեպների առաջին իսկ տողերից զգում է գեղեցկության տիրական շունչը, որ գոհացնում է գեղեցիկի նրա պահանջը և նորավեպի

[4] Սիպիլ, գրական ասուլիսներ, էջ 22

ընթերցումը ավարտում է՝ զգալով, որ իր հոգին նույնպես լցվեց գեղեցկության զգացումով: Եվ այս տեսակետից Զոհրապի նորավեպերը կարևոր դեր էին կատարում: Այնպիսի ժամանակ, երբ համիդյան ռեժիմի մագիլները իջնում էին մարդկանց հոգիների մեջ, երբ «սրտի և մտքի» հալածանքները առաջացնում էին տխրության, հուսալքման, նույնիսկ հոռետեսության տրամադրություններ, Զոհրապի նորավեպները, իբրև հակաթույն, անուղղակի պայքարում էին այդ տրամադրությունների դեմ, տխրության թույնի դեմ: Իսկ տխրությունը այդ ժամանակ այնպիսի չարիք էր դարձել, որ ութսունականները համարում էին «ազգերու թոքախտ»: Հետևապես, այդ տրամադրությունների դեմ պայքարը պայքար էր այդ թոքախտի դեմ: Ահա Զոհրապի նորավեպերի արտակարգ հմայքի պատճառներից մեկը:

Այնուհետև, երբ անցնում ենք նորավեպիեի ժաղովածուներին, պիտի շեշտենք, որ Զոհրապի նորավեպերը, չնայած հայ մամուլի բազմիցս արած պահանջներին, ժողովածուներով հրատ արակել սկսեց Զոհրապը շատ ուշ, 1909թ., երբ գրքի հրատարակության արգելքները, պետական հեղաշրջումից հետո, ժամանակավորապես վերացվեցին: Զոհրապը կարողացավ հրատարակել միայն երեք ժողովածու՝ «Խղճմտանքի ձա յներ», «Կյանքը ինչպես որ է» և «Լուռ ցավեր», որոնց մեջ ամփոփեց իր նորավեպերի մեծագույն մասը: Ժողովածուների այդ խորագրերը, որ, ինչպես տեսնում ենք, հետո են տրված, պատահական չեն սակա յն, այլ, ըստ էության, մատնանշում են հեղինակի գեղագիտական որոշ հայացքները, նշանակում է՝ այդ խորագրերով հեղինակը բանալի է տվել հասկանալու իր նորավեպերը:

Հաջորդ քայլում աշակերտը պիտի հասկանա, թե ինչպես է բացատրում հեղինակը իր գեղագիտական ըմբռնումները: «Մեծ պատահարները, -ասում է նա, - գիս անտարբեր կը թողուն. բայց մանր դեպքերը՝ չնչին ուրիշներու աչքին, լուրջ խորհրդածություններու նյութ են ինծի: Դասերը, որ կը քաղեմ անոնցմե, վրդովիչ պայմանական կարգ ու սարքի կուսակիցներուն, թանկագին են ինծի համար: Անոնք կուգան հաստատել այն բարոյականը, որ իմս է, ճիշտ ներհակը և գլխավարը հանրության մեջ ընդունվածին. իմ բարոյականս, որ կը կայանա Իրականը՝ Սուտին, ճշմարիտը՝ Կեղծին վերադասելուն մեջ ամեն տեղ և ամեն ժամանակ»[5]:

«Այրին» նորավեպի ուսուցումը կարելի է սկսել «Արևելք» թերթի թղթակիցներից մեկի գրառումից: Պանդխտության վերաբերյալ փոքրիկ նկարագրությունից հետո նա գրել է. «Այս փոքրիկ նկաագրությունը բանաստեղծություն չէ, այլ իրական պատկերը առանց չափազանցության: Հայերը բանաստեղծելու պետք չունեն, հայերը Վեպեր հնարելու պետք չունեն. հայոց կյանքը բանաստեղծություն է և վեպ և տխուր բանաստեղծություն»[6]:

«Այրին» նորավեպում տեսնում ենք արդեն լիովին կազմակերպված գրողական ասելիք՝ գույների հարուստ ներկապանակով, գույներ, որոնք ոչ միայն ռեալիստորեն ու ճշմարտացի տիպականացնում են իրականությունը, այլև հեղինակի և ընթերցողի միջև

[5] Գրիգոր Զոհրապ|, Նովելներ, Երևան, 1954, էջ 37

ստեղծում են անհրաժեշտ հոգեկան պորտալարը: Այս նորավեպում արդեն ձևավորվում են զոհրապյան գրելակերպի հմտությունը, պարզությունը, պատկերավորությունը, բարձր հուզականությունը, հոգեկան դրամայի լուռ բացահայտումը խղճմտանքի ձայների ուղեկցությամբ:

Նորավեպի մանրամասների ներկայացման ժամանակ կարելի է աննշան թվացող այդ նկարագրությունը դարձնել իրավիճակային միտք. բերում ենք մի օրինակ. երբ ուժասպառ բեռնակիրները մեծ փողոցում բեռը վայր են դնում հանգստանալու, ոստիկանը չի թողնում՝ ասելով, որ չի թույլատրվում կանգ առնել, ծերուկ բեռնակիրն ասում է .«Պիզիմիտե ճանմիզ յո՞խ, պե մարդ աստուծո»: Ու երբ բացատրվում է միտքը, լսարանի համար պարզ է դառնում հայ մարդու իսկական էությունը:

Նորավեպի հիմնական ասելիքը արդեն վաղուց բացահայտված է, և հատուկ անդրադարձ չենք անի այստեղ:

Նոր բացահայտումների համար շատ կարևոր է «Այինկա» նորավեպը: Թերևս շատ կարևոր է, որ դասարանում բացահայտվեն նորավեպի ասելիքի քիչ բարձրաձայնված դրվագներ, որոնք նոր լույս են սփռելու նորավեպի և գլխավորապես Զորհրապի մոտեցումների, համակրանքների և ուղղվածությունների վրա: «Այինկայի» մեջ բացահայտվում են հավաքական ըմբոստության դրվագներ, ավելի ճիշտ, մի փոքր դրվագ, ու ըմբոստության ցայտուն կրողներ են մաքսանենգների խումբը և նրանց համբավավոր պետը՝ Հակոբոսը: Հարկ է, որ ուսուցիչը նկատելի դարձնի, որ սիրով, ներքին գոհունակությամբ , մի տեսակ առնական հաճույքով է հեղինակը նկարագրում այդ փոքրիկ խումբը՝ հրացանը ուսերին, ատրճանակները մեջքներին կապած, և այս ամենը բնության ամենապոետիկ տեսարանների մեջ: Այդ կերպարների մեջ հատկապես երևացող է Հակոբոսը, որին Զոհրապը պատկերել է շատ հակիրճ ուրվագծերով, որոնք, սակայն, տիպականացնող են. նա քայլում է «զորավոր մարդերուն հատուկ դանդաղ ու ծույլ քայլվածքով»: Սակայն ավելի գեղեցիկ է նրա հոգեկան կորովը, նրա համարձակությունը. Նա, իր բնական իրավունքին հենված, պայքարում է «ճակատը բաց՝ փոխանակ ճգնավորի մը պես պահվըտելու»:Ահա թե ինչն է գրավում ընթերցողին: Երբ մի վկայության համար դատարան կանչված Հակոբոսին հարցնում են իր արհեստը, լեռների ըմբոստ զավակը «անփութորեն» պատասխանում է՝ այինկաճի: Նրա մեջքի դաշույնը՝ Դամասկոսի դյուրաթեք երկաթ…երբեք զուր տեղը փայլատակած չէ, երբեք անարդար գործի համար գործադրված չէ: Անկախ ամեն ինչից ուշադիր աշակերտ-ընթերցողը հայտնագործում է, որ Հակոբոսը իր շրջապատում վայելում է ընդհանուր համակրանք, և չնայած վտանգավոր զբաղմունքին՝ «մեկե ավելի աղջիկներ սրտատրոփ» սպասում են իր դուռը անցուդարձին»: Այս փոքրիկ, բայց խիստ բավանդակային գործը իրականում նորավեպ-դրամա է՝ գործողությունների գերխիտ զարգացմամբ ու բախումներով: Որպես միջառարկայական կապ՝ ուսուցիչը այստեղ կարող է ներկայացնել Ռեժիի գործունեությունը Թուրքիայում, նրա ձևավորած ոստիկանական ջոկատները և այդ համատեքստում՝ Սահակի կերպարի զարգացումը:

Կարևորն այն է, որ ընկալվի նախ ամբողջ գյուղի բախումը Ռեժիի ոստիկանների հետ, ապա՝ Սահակի ու Պերճուհու բախումը, այնուհետև բախումը եղբայրների Սահակի ու Հակոբոսի միջև, որը կկայանար, եթե չկանխվեր կողմերից մեկի (Սահակի) կամավոր մահով:

Ընդհանրացնելով կարելի է փաստել, որ նորավեպի հինգ գլուխներից յուրաքանչյուրն ունի կառուցվածքային որոշակի դեր, որը ցանկալի է, որ սովորողը ընթերցելիս կռահի. Օրինակ՝ չորրորդ գլխի մեջ տրված է հանգույցը և լուծումը: Նորավեպի վերջն ունի ողբերգական ուժեղ շեշտ, իսկ հինգերորդ գլխում, որը ընդամենը մի քանի տող է, հումորի շատ աննկատ շեշտով Զոհրապը ցույց է տալիս ճակատագրի դառը հեգնանքը՝ սպանողը ստանում է սպանվողի ամսական թոշակը:

Նորավեպում բնանկարի ակտիվ դերը նկատելի դարձնելու համար ուսուցիչը մի քանի մանրամասներով կարող է անդրադառնալ՝ կարդալով նորավեպից այն կտորները, որտեղ բնանկարագրությանը հաջորդում է գործողությունը, այսինքն՝ այդ նկարագրությունը առաջ է մղում գործողության զարգացումը:

Այն հատվածում, որտեղ Հակոբոսը գնում է մաքսանենգների քարավանի առջևից, տարված է իրեն տանջող մտքերով. Մի պահ մտածում է թողնել այդ «մշտնջենական վտանգի արհեստը, որ հիմա եղբայրասպան հանդիպումներու զարհուրանքով կը լեցվեր», և նրա հոգեկան այս վիճակին համընկնում է հետևյալ բնանկարը.

«Անտառը կմտներ. ու լուսինն ալ կը կոնարհեր, կիջներ իր բարձրութենեն անտառին ծոցը, ծառերուն սաղարթներուն, երկարող վտիտ ընձյուղներուն վրա, որոնք իր սկավառակին մեջ կը մեխվեին, կարծես հոն անձնասպան ըլլալու համար՝ նետվելով անտառին սուր ծայրերուն վրա, որոնք զինքը պիտի գիշատեին»[6]:

Կամ Սահակը իր նախկին սիրածին տեսնելուց հետո գնում է դեպի լեռը. նա հմայված է՝ «կրելով հրապույրը իր առջի սիրած աղջկան», բայց այդ վերարծարծված սերը սարսափեցնում է նրան: Անտառի վեհաշուք խաղաղությունը բարկացնում է նրան, որովհետև չի համապատասխանում իր ապրումներին:

Իսկ նորավեպի հիմնական ասելիքին կարելի է ավելացնել միայն այն, որ Սահակը, մերժված սիրո անակնկալ վերադարձի ուժգնությամբ համակված, մահվան դեմ աներկյուղ է, որովհետև սերը անեզրական ուրախությամբ է համակել նրա էությունը, և մահը սոսկալի չի թվում այլևս: Այս ամենը այնքան հանկարծակի է կատարվել, այնքան անըմբռնելի է սիրուց բաժանվելու միտքը, որ իր շուրջը տեղացող գնդակները թվում են նրան զվարճալի: Ու այսպես մանրամասնել մինչև նորավեպի վերջը:

Իսկ երբ փորձենք բացել հաջորդ նորավեպի «Ճիտին պարտք»-ի հոգեբանական և սոցիալական շերտերը, աշակերտը պիտի կարողանա անցնել այդ դրամայի միջով, շատ հաճախ տեղայնացնել ու նաև նորացնել նորավեպի ժամանակը: Երբ նորավեպի սկիզբը

[6] ,Գրիգոր Զոհրապ, Երկեր, Երևան, 1989թ, էջ91:

մարսված լինի, մարսված լինի հենց սկիզբը, աշակերտ այլևս ոչ մի տարակույս չի ունենա. ամեն ինչ այնտեղ է: Մի քանի տողանոց պարբերության մեջ աշակերտը նկատում է, որ «կաշիե մեծկակ պայուսակը» շատ զորավոր է, իսկ նրա մանկահասակ զավակների համար՝ խոստումնապահ: Կզգա, որ այս մի տեսակ դանայան տակառն է, որ սպառել է Հուսեփ աղային, խլել է նրա կյանքը, ամեն ինչ: «Ո՞վ է տերը այս երկուքին մեջ». այս հարցը նորավեպի հենակետն է ամեն առումով, ու սովորողը այն պիտի ընկալի, պիտի ընկալի, որ կոնֆլիկտը Հուսեփ աղայի և վաճառականների միջև չէ, այլ կարիքի և նրա զոհի միջև, որը չէր կարող մարել այնտեղ, ուր կարիքը և ահը առաջին ջութկն են նվագում: Այս տողերով երեխան հասկանում է, որ հեղինակը տվել է նաև հիմնական կոնֆլիկտի լուծումը: Ո՞վ է տերը հարցին նա պատասխանում է՝ տոպրակը, որը խորհրդանշում է կարիքը:

Մի այլ մանրամասն. հայտնի է, որ լուսինը շատ բաների հետ է համեմատվել, բայց ոչ դրամի՝ Զոհրապի արտահայտած առումով, սակայն դասարանը պետք է, որ կռահի, որ այս համեմատությունը շատ տեղին է և բխում է նորավեպի ասելիքից, դրսևորում է նորավեպի կերպարի միտքը լլկող սևեռուն գաղափարը, նրա գործունեության գլխավոր շարժառիթը: Այս մասին Մինաս Հյուսյանը գրել է. «Այս համեմատությունը ուրիշ գույնի կարկատանի պես չի առանձնանում ընդհանուր հյուսվածքից, այլ լիովին ներդաշնակում է նրան»[7]: Այս մտքին պիտի հանգի նաև ընթերցող աշակերտը:

Երբ հերթը հասնում է «Փոստալին», կարող են փաստել, որ այս նորավեպի սյուժեն բարդ չէ: կարելի է արագ ըմբռնել ասելիքը: Դիպաշարի ընկալումից հետո պետք է սկսել աշխատանքը. հոգեկան ի՜նչ խոր տառապանք է ապրում Տիգրանուհին: Անարգված, լքված կնոջ դառը վիճակի գիտակցության մեջ, շշմած անակնկալ հարվածից, փոքրացած իր վշտի ծանրության տակ, գնում է նա՝ շրջապատին անուշադիր ու անտարբեր: Շատ արագ կարելի է նկատել, որ այստեղ Զոհրապը կտավի վրա նետում է մի քանի խոսուն ուրվագծեր, որով էլ լարում է ընթերցողի երևակայությունը: Պետք է հասնել նրան, որ աշակերտը տեսնի Տիգրանուհու վիշտը, փորձի «շոշափել» նրա արցունքոտ աչքը:

Առաջ անցնելով՝ ստորև ներկայացնենք այս աշխատանքի թերևս միակ մեթոդական ուղղվածությունը:

[7] Մինաս Հյուսյան, Գրիգոր Զոհրապ, Կյանքը և ստեղծագործությունը, 1957թ, էջ 131:

Գրիգոր Զոհրապի «Փոստա՛լ» նորավեպի առաջադրանքների դասակարգման փորձ՝ ըստ գնահատման 10-միավորանոց սանդղակի

1-3	Վերնագրի իմաստի ընկալում, դիպաշարի պարզ վերարտադրություն, հերոսների ներկայացում:
4-5	Վերնագրի առանձնահատկության ընկալում (հասցեականություն), ստեղծագործության լեզվի, ժանրային պատկանելիության իմացություն, նորավեպային դիպաշարի առանձնահատկության վերհանում:
6-7	Նորավեպում մարդու հիմնարար իրավունքների աղաղակող խախտման և նրա ժամանակակից ընկալման ըմբռնում և վերհանում, հերոսների հոգեբանական առանձնահատկությունների նկարագրում:
8	Նորավեպի համակողմանի վերլուծություն, Տիգրանուհու և նրան շրջապատող մարդկանց ընկերային և մարդկային հակասականու-թյան ընկալում և վերարտադրում (ցանկալի է՝ գրավոր):
9	Նորավեպում հասարակական ու բարոյական հնչեղություն ունեցող հարցերի վերհանում ու հնարավոր լուծումների անդրադարձ: Դիպաշարի հավանական փոփոխություն՝ հնարավորիս պահելով նորավեպի լեզվական ու հուզական ատաղձը. Տիգրանուհու կերպարի այլ զարգացում, հեղինակի, մյուս հերոսների հավանական այլ վերաբերմունք նրա նկատմամբ:
10	Հասարակության բարոյական նկարագրի ընկալում, նորավեպում հազվադեպ երկխոսությունների խորքային ասելիքի ընկալում և վերհանում: Հեղինակային վերաբերմունքի ամբողջական ընկալում ու վերհանում փոքր մարդկանց ճակատագրերի, նրանց նկարագրի վերաբերյալ Զոհրապի մյուս նորավեպերի ֆոնին: Սեփական դատողությունների ու գնահատականների հստակ շարադրում բանավոր և գրավոր:

Մի փոքրիկ անդրադարձ Հաճի Տյուրիկին. նրան հեղինակը անվանում է «եփուն» կին: Այս մակդիրը կարող է ազդակ լինել, որ զոհրապյան մյուս հերոսների այս կողմերին էլ ուշադրություն հատկացվի: Նա սկզբում միջնորդ օղակ է ընդհարվող կողմերի միջև, ապա դառնում է կողմերից մեկը, և այդ տեսակետից հետաքրքրական է նրա կերպարի զարգացումը ժամանակակից ընկալման տեսակետից, քանի որ աշակերտը, ժամանակակից աշակերտը անմիջապես կռահում է նրա իրական «առաքելությունը»: Թրաֆիքինգի նմանօրինակ ընկալումը և այդ համատեքստում Հաճի Տյուրիկի, Տիգրանուհու, Սուրբիկ հանըմի և Օննիկի կերպարների քննությունը ու նրանցից մեկի՝ Հաճի Տյուրիկի կերպարի զարգացումը բերում է հետաքրքիր վիճակի. Հաճի Տյուրիկը, թվում է, պիտի մինչև վերջ պաշտպանի Սուրբիկ հանըմին, սակայն Տիգրանուհու վտարման ժամանակ անցնում է Տիգրանուհու կողմը: Սա բնորոշ չէ ժամանակակից թրաֆիքինգի «կանոններին»: Նորավեպի այս հատվածը հարկ է, որ նորից ընթերցվի ու ընթերցվի նպատակային . «Փոստա՜՜լը, փոստա՜՜լը, ով գիտե ո՛ր ծառաս գլխե հաներ է:

Այն ատեն Հաճին նեղացավ ա՛լ. ձեռքերը մեջքին դրավ ու ամբարտավան ձևով մը.

-Ինծի նայե, հանըմ, շտտակն ըսե՞մ, անիկա խեղճ կնիկ ծառա մըն է, դուն քու տղուդ խոսք հասկըցնելու էիր. Հիմա ալ ելեր ծառայի հետ տեսնվեր է կըսես. Ասիկա մեղք է…… Ինծի նայե, ձեր տղաքներուն էյլենճեին համար տունը աղվոր պեսելմե ուզողը փարա տալեն քաշվելու չէ, հասկցա՞ր, օղուլ»[8]: ու այսպես մինչև վերջ:

Ոճը, որով գրված է «Փոստալը», մի կողմից սուր, կտրուկ, ոչնչացնող երգիծանքով և ատելությամբ միասնացած ոճն է, որով առհասարակ Զոհրապը պատկերում է հարուստներին, մյուս կողմից՝ խիստ համակրական և հուզականությամբ լի, երբ պատկերում է սոցիալական և այլ անարդարությունների զոհերին:

Հարկ է, որ դասարանին տեղեկացվի մի շատ զարմանալի բան. Զոհրապի այս նորավեպի հրատարակումը հնարավոր է ելել միայն թուրքական գրաքննությանը մոլորության մեջ գցելով. թուրքական իրականության մեջ հայ մեծատունների քննադատությունն անգամ համարվում էր մեծ մեղք:

Զոհրապի մեկ այլ նորավեպ՝ «Մագթաղինեն» կարելի է հպանցիկ քննարկել «Մշակույթ և բարքեր, անհատ և հասարակություն» թեմայի շրջանակներում ու կանխապես էլ փաստել, որ հեղինակի վերաբերմունքը այս նորավեպի գլխավոր խնդրին պարզ է ու վերջնական. նա պոռնկությունը համարում է սոցիալական երևույթ: Եվ Մագթաղինեի կերպարի զարգացումը տանում է հենց սրանով: Ահա նրա պատմությունը. «Երկու տարի առաջ մայրիկս մեռավ, -այս «իկս»-ին մեջ անհուն գորովանք մը կա.-հայրս չեմ ճանչնար. ինե երկու տարու փոքր քույր մը ու ավելի պզտիկ եղբայր մը ունիմ. ասոնք են իմ բոլոր ազգականներս.քույրս ու եղբայրս դպրոց դրած եմ. ամենքը ես կպահեմ:

[8] Գրիգոր Զոհրապ, Երկեր, Երևան, 1989թ, էջ24:

Այս վերջին բառին մեջ իր ընտանիքի տեր ու գլուխ եղող անձի պատասխանատվությունով լեցուն հպարտության շեշտը կդնե»[9]: Այսքանը բավական է: Սովորողները մտքում կանեն իրենց իմացածի ու կարդացածի հնարավոր համեմատությունը և եթե կարևորեն, կծավալվի նաև բանավեճ:

Նույն տրամաբանության մեջ պիտի քննվեն նաև «Երջանիկ մահ»-ը, «Զաբուղոնը», «Թեֆարիկը» և առհասարակ բոլոր նորավեպերը, քանի որ թեմատիկ բաժանումը հաճախ կարող է աղճատել ասելիքի տարողունակությունը, խորքային նկարագիրը և հեղինակի ներքին նպատակադրումը:

Չի բացառվում, որ նոր չափորոշիչների և դրանց պահանջների ներդրմամբ տարիների հետ ձևավորվեն թեմատիկ հստակ պատկերներ, որոնց մեջ կարելի լինի զետեղել Զոհրապի նորավեպերը՝ առանց նկատելի կորուստների:

[9] Գրիգոր Զոհրապ, Երկեր, Երևան, 1989թ էջ 49:

Օգտագործված գրականության ցանկ

1. https://escs.am/files/files/2020-07-17/0c0bec6bd1b12c6389919925ac049d7e.pdf escs.am

2. Գրիգոր Զոհրապ, Երկեր, Երևան, 1989թ

3. Հրանտ Ասատուր, Դիմաստվերներ, Կ.Պոլիս, 1921

4. Սիպիլ, գրական ասուլիսներ

5. Գրիգոր Զոհրապ|, Նովելներ, Երևան, 1954

6. Մինաս Հյուսյան, Գրիգոր Զոհրապ, Կյանքը և ստեղծագործությունը, 1957թ